

գտնուի հայկական Կապանէն մէկ ժամ հեռաւորութեան վրայ: Հայկական Կապանի հայութիւնը մարդկային եւ նիւթական կորուստներ ունեցած է 1895-ի համիտեան կորուստներուն, իսկ 1909-ին՝ թուրքեր կողոպտած են գիւղը ու սպաննած 60 հայ (Հ. Միսնեան, նշ. աշխ., էջ 166), որոնք իրենց ետին ձգած են առաքելական համայնքի 45 որբ (Տեղեկագիր 1909..., էջ 91):

Հայաբնակ Կապանը ունեցած է հայ առաքելական եւ անտարանական զոյգ եկեղեցիներ, իսկ տեղւոյն ազգային վարժարանը, 1911-1912 դպրոցական տարեշրջանին, ունեցած է 53 աշակերտ: Գիւղը 1912-ին ունեցած է 300 տուն հայութիւն, որուն 25-ը՝ անտարանական համայնքի իսկ մնացեալները՝ առաքելականներ (Տեղեկագիր Այրիսիւնամ..., էջ 29), իսկ ցեղասպանութեան մախօրեակին ունեցած է 400 հայ տուն (Գ. Գալուստեան, նշ. աշխ., էջ 61):

58 Պունտուգ կամ Պունտուխ: Ջուտ հայաբնակ գիւղ Կապանի եւ Ծիփկլիի մօտակայքը, Մարաշէն 33 քլմ. հիւսիս-արեւմուտք: Ջէթումի 1895-ի ինքնապաշտպանութեան կոնիւնտում, պունտուգիներ կարճ դիմադրութեան ետք, ապաստանած են Ջէթում եւ փրկուած՝ կոտորածէ: 1909-ին, գիւղը ունեցած է 70 տուն, որոնցմէ գոհուած է 35 հոգի (Հ. Միսնեան, նշ. աշխ., էջ 166), եւ որոնք իրենց ետին ձգած են առաքելական համայնքի 35 որբ (Տեղեկագիր 1909..., էջ 92), իսկ ըստ այլ աղբիւրի, 1915-ին, ան ունեցած է 150 տուն բնակչութիւն (Գ. Գալուստեան, նշ. աշխ., էջ 63):

59 Կամ Եւսիկլի: Ջուտ հայաբնակ գիւղ Մարաշէն հիւսիս-արեւմուտք, Ջէթում եւ Անտըրիմ գաւառակներու սահմանագիծին: Ջէթումի 1895-ի ինքնապաշտպանութեան կոնիւնտում, շիփկլիցիներ կարճ դիմադրութեան ետք, ապաստանած են Ջէթում եւ փրկուած՝ կոտորածէ: Ի. դարակազբին, ունեցած է 150-200 տուն, եկեղեցի եւ 150-170 աշակերտով դպրոց (Հայաստանի եւ յարակից..., Դ., 1998, էջ 94-95):

Կիլիկեան կոտորածները գիւղին մէջ իրենց ետին ձգած են առաքելական համայնքի 10 որբ (Տեղեկագիր 1909..., էջ 90): Առաջին աշխարհամարտի մախօրեակին գիւղին բնակչութիւնը գնահատուած է 1760-ով (R. Kévorkian-Paboudjian, նշ. աշխ., էջ 311):

60 Դաիթլի, Տաւուտեք կամ Թաւուտլու: Ջուտ հայաբնակ գիւղ Ծիփկլիի մօտակայքը, Ջէթումէն հարաւ-արեւմուտք եւ Մարաշէն 40-45 քլմ. հիւսիս-արեւմուտք:

Ըստ Մարաշի Առաջնորդարանի պատրաստած 30 Օգոստոս 1910 թուակիր տեղեկագրին, 1909-ի կոտորածներու մախօրեակին ան ունեցած է 20 տուն՝ 112 հայ բնակիչ, որոնցմէ կոտորուած է 3

հոգի: Թուրքեր այրած են նաեւ հայերու տունները (Յ. Թէրզեան, նշ. աշխ., էջ 268):

61 Թիշուած է նաեւ Աճէմ Օղլու եւ Էճէվլի ձեւերով: Հայաբնակ գիւղ Մարաշի մօտակայքը, Մարաշ գաւառի Անտըրիմ գաւառակին մէջ, Մարաշէն 18-20 քլմ. հիւսիս-արեւմուտք: Ըստ Մարաշի Առաջնորդարանի պատրաստած 30 Օգոստոս 1910 թուակիր տեղեկագրին, 1909-ի կոտորածներու մախօրեակին, ան ունեցած է 20 տուն՝ 135 հայ բնակիչ, որոնցմէ սպաննուած է 15 հոգի: Թուրքեր այրած են նաեւ հայերու տունները (Յ. Թէրզեան, նշ. աշխ., էջ 268): Կոտորածներու հետեւանքով գիւղը ունեցած է առաքելական համայնքի 20 որբ (Տեղեկագիր 1909..., էջ 90)

Ըստ այլ աղբիւրի, Առաջին աշխարհամարտի մախօրեակին, առաջը ունեցած է 84 հայ բնակիչ (R. Kévorkian-Paboudjian, նշ. աշխ., էջ 311):

62 Կամ Անեցիք: Գիւղ՝ Ջէթումի շրջանին մէջ, հին Անեքերդի մօտակայքը, Մարաշէն հիւսիս-արեւմուտք:

Ըստ Մարաշի Առաջնորդարանի պատրաստած 30 Օգոստոս 1910 թուակիր տեղեկագրին, 1909-ի կոտորածներու մախօրեակին, ան ունեցած է 80 տուն՝ 385 հայ բնակիչ, որմէ կոտորածներուն գոհուած է 8 հոգի: Թուրքեր այրած են նաեւ հայերու տունները (Յ. Թէրզեան, նշ. աշխ., էջ 268): Առաքելական համայնքի զոհերը իրենց ետին ձգած են 16 որբ (Տեղեկագիր 1909..., էջ 91):

63 Կամ Տրդատեք: Հայաբնակ գիւղ Ջէթում գաւառակին մէջ, Կապան բերդէն 20 քլմ. հարաւ-արեւելք եւ Մարաշէն հիւսիս-արեւմուտք: Ի. դարակազբին, ունեցած է 80 տուն հայ բնակիչ, իսկ 1910-ին՝ միայն 40 տուն (Հայաստանի եւ յարակից..., Ե., էջ 129), մինչ ըստ Մարաշի Առաջնորդարանի պատրաստած 30 Օգոստոս 1910 թուակիր տեղեկագրին, 1909-ի կոտորածներու մախօրեակին, գիւղը ունեցած է 60 տուն՝ 305 հայ բնակիչ, որոնցմէ կոտորածին գոհուած է միայն մէկ հոգի: Թուրքեր այրած են նաեւ հայերու տունները (Յ. Թէրզեան, նշ. աշխ., էջ 268):

64 Եփեսոս կամ Եարփուգ: Հայ եւ թուրք խառն բնակչութեամբ գիւղաքաղաք Ջէթումէն հիւսիս-արեւելք: Համաշխարհային Առաջին պատերազմի մախօրեակին, ունեցած է հայկական եկեղեցի եւ մօտ 2000 հայ բնակիչ՝ 100 աշակերտանոց վարժարանով (Գ. Գալուստեան, նշ. աշխ., էջ 67), իսկ Առաջին աշխարհամարտի մախօրեակին ունեցած է 233 հայ բնակիչ (R. Kévorkian-Paboudjian, նշ. աշխ., էջ 301):

1914-1918 թթ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌՈՒՄ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱՐԱՆՈՒՄԸ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Արմեն Հայրապետեան

Առաջին աշխարհամարտը դարձաւ Հայ ժողովրդի պատմութեան ամենահակասական էջերից մէկը: Կոչուած լինելով իրագործելու նրա ամենահամարձակ երազանքները՝ այն անդառնալի կորուստներ պատճառեց Հայութեանը՝ Հայրենազրկելով պատճառեց իր ժողովրդին: Թուրքական եւ նրա մի մեծ հատուածին: Թուրքական եւ թաղական փրկուածները մի մասը Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկայի երկրներում ձեւաւորեց Հայկական սփիւռքը: Եւս 300,000-ն անցաւ Արեւելեան Հայաստան եւ Կովկասի Հայաստան շրջաններ: Միայն Ալեքսանդրապոլի գաւառը 1914-1917 թթ. ընթացքում ընդունեց աւելի քան 95,000 փախստական-գաղթականների, որոնց մի մասը Հաստատուեց գաւառի տարածքում, իսկ միւսներն անցան Ռուսական կայսրութեան այլ շրջաններ²:

Արեւելահայ պարբերական մամուլն ուշի-ուշով Հետեւեց այդ գործընթացին, լուսաբանեց գաղթականներին ընդունելու եւ ապրուստի տարրական միջոցներով ապահովելու աշխատանքները, ներկայացրեց Հասարակական առանձին կազմակերպութիւնների ձեռքբերումները խնամատարութեան, Հիւանդանոցներում ու որբատարութեան, Հիւանդանոցներում ու որբատարութեան կազմակերպման ոլորտներում: Մամուլը զուգահեռ մատնանչեց նաեւ այդ աշխատանքներում թոյլ տրուած բացթողումներն ու թերացումները, առաջարկեց

առկայ խնդիրների լուծման ճանապարհներ:

Իր այս հետեւողական աշխատանքի շնորհիւ Ի. դարասկզբի արեւելահայ պարբերական մամուլն ուղղակի վերածուեց ժամանակի պատմաքաղաքական անցուղարձը լուսաբանող գրաւոր սկզբնաղբիւրի՝ մեր ժամանակների ուսումնասիրողին տալով Համեմատութիւններ ու վերլուծութիւններ կատարելու բաւականին լայն Հնարաւորութիւններ:

Ստորեւ կը փորձենք Ալեքսանդրապոլի գաւառի օրինակով ցոյց տալ, թէ ինչ դերակատարութիւն ունեցաւ պարբերական մամուլը գաղթականութեան շրջանում առկայ խնդիրների վերահաման եւ լուսաբանման գործում: Ի դէպ, այդ խնդիրները կարելի է պայմանականօրէն բաժանել երեք խմբի՝ խնամատարութիւն, Հիւանդանոցային եւ կրթական գործերի կազմակերպում:

Խնամատարութիւն

Ռազմական գործողութիւնները Կովկասեան ճակատում սկսուեցին 1914 թ. նոյեմբերի 2-ին: Գրեթէ միաժամանակ յայտնուեցին նաեւ առաջին փախստականները³: «Պատերազմը, գրում է Ալեքսանդր

3 Ի. դարասկզբի մամուլը գաղթականների մէջ չի տարանջատել արեւմտահայերին, արեւելահայերին եւ պարսկահայերին, այսինքն՝ փախստականներին ու գաղթականներին: Միանշուտ 1914-1915 թթ. մենք գործ ունենք միանգամից երեք կատեգորիաների հետ, 1916-1917 թթ.՝ միայն պարսկահայերի եւ արեւմտահայերի հետ, իսկ 1918թ.՝ գերագանցապէս արեւելահայերի հետ:

1 Ալ. Խատիսեան, *Քաղաքապետի մը յիշատակները*, Պէյրութ, 1991, էջ 251:
2 ՀԱԱ ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:

րապոլում հրատարակող «Գալաոի ձայն» օրաթերթը,- իւր սոսկալի հետեւանքներով արդէն բացել է հայ ազգի մահացու վէրքերից մէկը՝ գաղթականութիւնը: Սարսափահար ժողովուրդը ստիպուած է ... թողնել ապրուստի միջոցները եւ ... որոնել մի անկիւն իր ընտանիքն ազատելու սրից ու մահից»⁴:

Գաղթականներին ընդունելու, տեղաւորելու, սննդով ու հագուստով ապահովելու նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե.ի կարգադրութեամբ Անդրկովկասի հայաշատ գաւառներում ու բնակավայրերում ստեղծուեցին «Եղբայրական օգնութեան» կոմիտէներ: 1914 թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի գլխավորութեամբ կոմիտէ ստեղծուեց նաեւ այստեղ⁵: Կոմիտէի ծաւալելիք գործունէութեան մասին «Գալաոի ձայնի» Քաղաքացի ստորագրող թղթակիցը գրում է. «Աղէքսանդրապոլի հայ ժողովուրդը, որը իւր չքաւոր դրութեան մէջ էլ միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին, ... արդէն կազմել է մի պաշտօնական բիւրօ, որը... պարտաւոր է օգնել վիրաւոր եւ հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին եւ խնամել հայ գաղթականներին»⁶: Եւ իրօք, հաշուած օրերի ընթացքում կոմիտէն միայն Ալեքսանդրապոլ քաղաքում 100-250 հոգանոց 18 հանրակացարան կահաւորեց փախստականներին ընդունելու համար⁷:

4 «Գալաոի ձայն», Ալեքսանդրապոլ, 1914, թիւ 109, 23 նոյեմբերի, էջ 3:
 5 ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23-24:
 6 «Գալաոի ձայն», 1914, թիւ 109, 23 նոյեմբերի, էջ 3:
 7 Նորեկներն արայծմ տեղաորուելու էին միայն Ալեքսանդրապոլ քաղաքում եւ Արեւելեան Օիրակի գիւղերում: Գաղթականութեան զանգուածային ներհանրապետական Փամբակի գաւառակ սկսուեց 1915 թ. յուլիսին (մանրամասն տե՛ս Ա. Հայրապետեան, Արեւմտահայ գաղթականութիւնն Ալեքսանդրապոլի գաւառում 1914-1918 թթ.- «Առաջին աշխարհամարտը եւ հայ ժողովուրդը. պատմութիւն եւ արդիական խնդիր»

Առաջին 3000 հայ եւ յոյն փախստականները Ալեքսանդրապոլի գաւառ հասան 1914 թ. նոյեմբերի կէսերին⁸: Սարիղամիշի գործողութեան օրերին ներհոսքն ընդունեց աւելի մեծ չափեր: 1915 թ. յունուարի 30-ին անցկացուած մէկօրեայ ցուցակագրման տուեալների համաձայն՝ պատերազմի առաջին երեք ամիսների ընթացքում հիմնականում Կարսից, Կաղզուանից, Օլթիից, Արդահանից եւ Սարիղամիշից Ալեքսանդրապոլի գաւառ անցածների թիւը կազմեց 6909 մարդ⁹: Ի դէպ, եթէ յոյն փախստականները, վայելելով ռուսական հրամանատարութեան բացարձակ համակրանքը, գաղթել էին իրենց սայլերով ու ունեցուածքով, հայերը որպէս կանոն կիսամերկ էին ու ընչազուրկ¹⁰: «Գալաոի ձայնի» հաւաստմամբ՝ սրանք ալեքսանդրապոլցիների կամաւոր նուիրատուութիւնների շնորհիւ ստացան անվճար բնակարան, վառելիք, հագուստ եւ մէկ անձի համար ամսական երկու փութ հաց (1 փութը կշռում է 16 կգ 380 գ)¹¹: Աւելին, «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէն, «Մշակ» պարբերականի հաւաստմամբ, նոյնիսկ հաշուել էր, որ իւրաքանչիւր գաղթական ընտանիքի իր բնակութեան նախկին վայրը վերադարձնելու եւ կորց-

ներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներին ժողովածու, Երեւան, 2015):
 8 ՀԱԱ, ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, 151-158, 249-252, գործ 21, թթ. 141-165:
 9 *Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915 гг.*, Перепись произведена 30-го января 1915 г., Эривань, 1915, стр. 26-31. Ալեքսանդրապոլի գաւառը վիճակագրական միութեամբ (XIX դ. - XX դ. սկիզբ), Փաստաթղթերի եւ միութեան ժողովածու՝ աշխատասիրութեամբ Ա. Հայրապետեանի, Երեւան, 2011, էջ 232-235:
 10 Մանրամասն տե՛ս Ա. Հայրապետեան, *Առաջին աշխարհամարտը եւ Ալեքսանդրապոլի գաւառի փախստական գաղթականութեան թուաքանակը*, «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԼԵ, Պէյրութ, 2015, էջ 252:
 11 «Գալաոի ձայն», 1915, թիւ 1, 11 յունուարի, էջ 3:

րած տնտեսութիւնը վերականգնելու համար պահանջուում է 500 ռուբլի¹²:

Խնամատարութեան գործում էական խնդիրներ չառաջացան նաեւ 1915 թ. դարնանը, երբ սկսուեց արեւմտահայութեան ներգաղթը: «Մշակին» թղթակցած Գեորգ ք. Մկրտումեանը, ով բարեգործական առաքելութեամբ Աստրախանից գործողուել էր նախ Թիֆլիս, ապա Ալեքսանդրապոլ, բարձր գնահատական է տուել գաղթականների վիճակի բարելաւման գործում հասարակական կազմակերպութիւնների եւ յատկապէս «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէի ծաւալած գործունէութեանը՝ շեշտելով, թէ վերջինս «պատուով է տանում իր առաջ դրուած գործը»¹³:

Գաւառում գաղթականների տեղաւորման ու տարրական կենսապայմանների ապահովման գործում առաջին լուրջ թերացումներն արեւելահայ մամուլն արձանագրեց 1915 թ. ամռանը, երբ ռուսական զօրքի երրորդ նահանջի հետեւանքով աւելի քան 200,000 քրիստոնեաներ վանի, Բիթլիսի եւ Էրզրումի վիլայիթներից հաշուած օրերի ընթացքում անցան Արեւելեան Հայաստան:

Ըստ Ալ. Խատիսեանի՝ Համառուսաստանեան քաղաքների միութեան (այսուհետեւ՝ Քաղաքների միութիւն) կովկասեան բաժանմունք ներկայացրած զեկուցարի միայն Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած արեւմտահայերի թիւը 1915 թ. օգոստոսի վերջին կազմեց 31,000 մարդ¹⁴:

Բազմահազար գաղթականներին ապաստան տալու եւ նրանց ֆիզիկական գոյութիւնն ապահովելու համար որոշուեց շուրջ 4000 մարդու տեղաւորել «պահուստ»¹⁵:

12 «Մշակ», Թիֆլիս, 1915, թիւ 51, 10 մարտի, էջ 2-3:
 13 «Մշակ», 1915, թիւ 100, 13 մայիսի, էջ 3:
 14 *Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них*, Тифлис, 1915, стр. 26.

տային» ֆոնդում՝ Փամբակի գաւառակում: Սակայն դա, ըստ «Գալաոի ձայնի» թղթակցի, արուեց հակառակ տրամաբանութեանը. Փամբակի մեծ գիւղերում, ուր կար 300 եւ աւելի տուն (օրինակ՝ Մեծ Ղարաքիլիսայում), տեղաւորեցին 130-հոգանոց խմբեր, իսկ փոքր գիւղերում, օրինակ 80 տնից բաղկացած Դարբազում, ուր նորեկներին տեղաւորելու համար նոյնիսկ յարմար շինութիւն չկար, 100 գաղթական: Ըստ պարբերականի՝ բանը հասաւ նրան, որ դարբազցիները սպառնացին գաղթականներին վտարել իրենց գիւղից¹⁵: Հակամարտութիւնը արեւմտահայերի եւ դարբազցիների միջեւ շարունակուեց կէս տարի: Դէպքերին հետեւող «Գալաոի ձայնի» թղթակիցը գրում է, թէ կրքերը հանդարտուեցին միայն 1916 թ. մարտի սկզբներին, երբ տեղ հասաւ ԱՄՆ-ից ուղարկուած օգնութիւնը¹⁶:

1915 թ. յուլիս-օգոստոս ամիսներին Փամբակում գաղթականների տեղաւորման ժամանակ թոյլ տրուած սխալներին անդրադարձել է նաեւ «Մշակը»: Պարբերականի Ականատես ստորագրող թղթակցի վիլայութեան համաձայն՝ գաղթականների յոյսերն ու սպասելիքները չարագործացան յատկապէս Մեծ Ղարաքիլիսայում: Խուսափելով «չարաբաղդ աղէտեալների» ընդունման ու խնամքի ծանր պարտականութիւնից՝ մօտ 10,000 բնակչութեամբ այս գիւղաքաղաքը, որն ունէր բազմաթիւ դատարկ ու լուսաւոր բնակարաններ, դեղատներ, մթերքի շուկայ եւ այլ յարմարութիւններ, «ուղղակի զլացաւ իր մէջ պատուարելի փախստականների՝ հիւանդների, տանջուածների եւ որբերի մի խոշոր կօտինգին»¹⁷:

«Մշակն» անդրադարձել է նաեւ Ալեքսանդրապոլի հանրակացարաններում

15 «Գալաոի ձայն», 1916, թիւ 7, 7 փետրուարի, էջ 4:
 16 «Գալաոի ձայն», 1916, թիւ 19, 20 մարտի, էջ 4:
 17 «Մշակ», 1915, թիւ 177, 13 օգոստոսի, էջ 2:

կիսամերկ ու սոված սասունցիներ³⁰: Նորեկներին տարրական կենսապայմաններով ապահովելու համար «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէն փորձեց ալիւրի բաշխումը ժամանակաւորապէս փոխարինել դրամական նպաստով՝ մէկ փութը 3 ուրբի հաշուով: Սակայն, այս նոր քաղաքականութիւնը ոչ միայն իրեն չարդարացրեց, այլև ըստ «Աշխատանք» պարբերականի՝ յանգեցրեց ալիւրի գնաճի³¹:

Մինչեւ տարեվերջ Արեւելեան Շիրակի գիւղերում հաստատուեցին եւս 1370 սասունցիներ³²: Հակառակ գործադրած բոլոր ջանքերին, տեղի հասարակական կազմակերպութիւններին այս անգամ չյաջողուեց ձմռան նախաշմին լուծել գաղթականների տեղաւորման ու տարրական կենսապայմանների ապահովման խնդիրները: Ստեղծուած իրավիճակում «Եղբայրական օգնութեան» տեղի կոմիտէի նախագահ Արտակ վարդապետը, Ալեքսանդրապոլի գաւառապետ Կալանդարիշուրիին եւ քաղաքապետ Կամսարականը «Մշակում» հրատարակեցին համատեղ կոչ՝ ուղղուած անհատ բարեգործներին եւ հասարակական կազմակերպութիւններին. «Վկայում ենք,- նշուած է ուղերձում,- որ օգոստոս ամսից Ալեքսանդրապոլի գաւառը եկած փախստականները, գլխաւորապէս սասունցիներ... առանց չափազանցութեան բոլորովին մերկ են: ... Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի խեղճ զոհերին եւ թոյլ չը տալ, որ գաղանութիւններից ազատուած՝ նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»³³:

Եւ օգնութիւնն իրեն երկար սպասել չտուեց: Գաղթականներին աշխատանքով, ուրեմն եւ ապրուստի միջոցներով ապահովելու, եւ տեղերում տնայնագործութեան զարգացման համար 1916 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ամերիկեան բարեգործական ընկերութիւնները Երեւանի նահանգի տարբեր գաւառներում հիմնեցին փայտի, կաթի, բրդի եւ բամբակի մշակման արհեստանոցներ: «Հայ գաղթականների ամերիկեան օգնութեան կոմիտէի» ներկայացուցիչ մայրը Մէյնարդի եւ «Եղբայրական օգնութեան» Ալեքսանդրապոլի կոմիտէի համատեղ ջանքերով 15-ական դադագաններով բրդի եւ բամբակի մշակման արհեստանոցներ բացուեցին նաեւ Ալեքսանդրապոլի գաւառում³⁴: Ըստ «Աշխատանք» օրաթերթի՝ սա հնարաւորութիւն տուեց 1490 գաղթականների ապահովել աշխատանքով: Այսինքն՝ միջին հաշուով մօտ 6000 մարդ բարելաւեց իր կենսապայմանները: Սրանցից 40-ը տղամարդիկ էին (վարպետներ), իսկ 1450-ը՝ կանայք (800-ն աշխատում էր բրդի, իսկ 650-ը՝ բամբակի մանարաններում)³⁵:

Փետրուարեան յեղաշրջումից յետոյ գաղթականութեան ընդունման, ցուցակագրման, տեղաւորման, կենսապայմանների ապահովման եւ այլ հիմնախնդիրների լուսաբանումն արեւելահայ մամուլի էջերում յետին պլան մղուեց. առաջնային քննարկման առարկայ դարձաւ բուռն զարգացում ապրող քաղաքական կեանքը:

Երկար որոնումներից յետոյ մեզ յաջողուեց գաղթականութեան խնդիրները լուսաբանող երկու կարճ հաղորդագրութիւն գտնել «Աշխատանք» օրաթերթում: Դրանցից առաջինը թուագրուած է փետրուար ամսով: Պարբերականի Երեւանցի ստորագրութեամբ թղթակիցը տեղեկաց-

30 «Մշակ», 1916, թիւ 244, 1 նոյեմբերի, էջ 3:
 31 «Աշխատանք», 1916, թիւ 20, 10 օգոստոսի, էջ 4:
 32 «Մշակ», 1916, թիւ 282, 18 դեկտեմբերի, էջ 3:
 33 «Մշակ», 1916, թիւ 244, 1 նոյեմբերի, էջ 3:

34 «Армянский вестник», Москва, 1917, год изд. 2, N 43, 23 ноября, стр. 18.
 35 «Աշխատանք», 1917, թիւ 42, 30 սեպտեմբերի, էջ 1-2:

նում է, թէ իրենց ներկայով ու ապագայով մտահոգուած սասունցիները՝ մշեցի Սմբատի ու Նժդեհի գլխաւորութեամբ Ալեքսանդրապոլում հիմնել են «Տարօն-Տուրուբերան» անունով մի ընկերութիւն, որը նպատակ ունի գաղթականներին արհեստներ սովորեցնել ու նպաստել հայրենիքի վերականգնմանը: Ըստ թղթակցի՝ ընկերութիւնը քաղաքում բացել էր երկու արհեստանոց. «կանանց... ուր մեքենաներով պատրաստում են չուլիկներ, գործում կտորներ, մանուկ թել... ու տղամարդկանց, որն ունի երկու մաս՝ ատաղձագործութիւն ու դարբնութիւն»³⁶:

Երկրորդ հաղորդագրութիւնը թուագրուած է հոկտեմբեր ամսով, երբ, ըստ արխիւային վաւերագրերի, Ալեքսանդրապոլի գաւառում, բացի որբանոցների սալերից, կար 25,754 գաղթական³⁷: Պարբերականի Աշուր ստորագրութեամբ թղթականիցը, նկարագրելով գաղթականների օրհասական վիճակը, ընթերցողի դատին է ներկայացնում մի միջոցառում, որը տեղի էր ունեցել սեպտեմբերի 24-ին Մօլլաբոկոչա գիւղում հաստատուած գաղթականների եւ պաշտպետ Պ. Խաչիկի միջեւ: Չցանկանալով սպասարկել գաղթականներին՝ վերջինս լկտի հայհոյանքներ էր տեղացել, կանանց սպառնացել ատրճանակով, ապահանջ արեւելահայ գրքոյկները, փակել պահեստը ու գնացել քաղաք՝ մարդկանց թողնելով սովի ճիրաններում³⁸: Թէ պատասպետի ու գաղթականների միջեւ ծագած վէճն ինչ ընթացք է ստացել, ծագած վէճն ինչ ընթացք է ստացել, մայրի չէ, որովհետեւ պարբերականն այլևս չի անդրադարձել այս խնդրին:

1918 թ. գարնանը տարածաշրջանում ռազմաքաղաքական իրավիճակը կտրուկ փոխուեց ի վնաս հայ ժողովրդի: Ապրիլի 1-ին սկսուած թուրք-անդրկովկասեան

պատերազմը եւ թուրքական զօրքի «յաղթարշաւը» կրկին խուճապ առաջացրին հայութեան շրջանում:

Փախստականների առաջին խմբերը Կարսի եւ Բաթումի շրջաններից Ալեքսանդրապոլ հասան մարտին³⁹, սակայն գաղթը զանգուածային բնոյթ ընդունեց ապրիլի 12-ից յետոյ, երբ Կարսը յանձնուեց թուրքերին: Տեղի շրջանային կոմիտեար Զամոյեանի Անդրկովկասեան Մէյմ ուղարկած հեռագրի համաձայն՝ մինչեւ 1918 թ. մայիսի 1-ը Կարս քաղաքից եւ համանուն շրջանից Ալեքսանդրապոլի գաւառ կարող էին անցնել մօտ 200,000 փախստականներ⁴⁰:

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին երկրամասում ստեղծուած քաոսային իրավիճակը հնարաւորինս մանրամասն նկարագրուել է «Մշակում»՝ մշտական թղթակիցներ Շարաֆեանի, Պապիկեանի, Մանդինեանի, Ղազարեանի, Ատրպետի եւ այլոց քրտնաջան ու անձնուրաց աշխատանքի շնորհիւ: «Փախստականների մի մասը, ով փրկել է իւր ունեցածքն ու անասունները,- գրում էր թերթը,- շարունակում է ճանապարհը դէպի Ղարաքիլիսա, Լօռի եւ նոյն իսկ Հիւս. Կովկաս: Միւս մասը ցրուել է Ալեքսանդրապոլի գաւառի գիւղերը»⁴¹: Անհատ բարեգործներին ու պետական հաստատութիւններին պարբերականը կոչ էր անում շտապ միջոցներ ձեռք առնել գաղթականների այդ լաւան ընդունելու, սննդով ապահովելու եւ տեղաւորելու համար, որովհետեւ հասարակական այն կազմակերպութիւնները, որոնք վերջին տարիներին զբաղուել էին նմանօրինակ խնդիրներով, այս քանակութեամբ գաղթականների օգնել ի զօրու չէին⁴²:

39 «Մշակ», 1918, թիւ 69, 1 ապրիլի, էջ 2:
 40 «Մշակ», 1918, թիւ 81, 17 ապրիլի, էջ 2:
 41 «Մշակ», 1918, թիւ 82, 1 մայիսի, էջ 3:
 42 Նոյն տեղում:

36 «Աշխատանք», 1917, թիւ 79, 8 փետրուարի, էջ 2-3:
 37 ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թ. 23-24:
 38 «Աշխատանք», 1917, թիւ 45, 11 նոյեմբերի, էջ 3:

գաւառում լրջագոյն տեղաշարժեր կատարուեցին. օգոստոսի 27-ին «Եղբայրական օգնութեան» կոմիտէի հիւանդանոցներն անցան Քաղաքների միութեան ենթակայութեան տակ: Ողջ բժշկա-սանիտարական գործը իր հսկողութեան տակ վերցրած կոմիտէն մինչեւ տարեվերջ միայն Ալեքսանդրապոլի գաւառում 5 հիւանդանոց հիմնեց, այդ թվում 200 մահճակալով մէկը՝ գաւառակենտրոնում⁶⁰, ինչի շնորհիւ գաղթականների շրջանում համաճարակային բռնկումները նուազեցին, իսկ մահացութեան դէպքերը դարձան հազուադէպ⁶¹:

Ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ Ալեքսանդրապոլի գաւառում շնորհիւ հասարակական կազմակերպութիւնների եւ յատկապէս Քաղաքների միութեան կոմիտէի անձնուրաց աշխատանքի մահացութեան մակարդակն ընդհանուրի համեմատ խիստ ցածր էր: Համաձայն Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի 1916 թ. յունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու հիւանդութիւններից 1915 թ. ընթացքում գաւառում մահացել էր ընդամենը 1164 գաղթական (331-ը՝ Ալեքսանդրապոլում, 833-ը՝ գաւառի գիւղերում)⁶²: Համեմատութեան համար նշենք, որ ըստ Բ. Իշխանեանի հաշուումների՝ էջմիածնում միայն 1915 թ. օգոստոսի վերջին տասնօրեակում սովի եւ

համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ, օրական միջին թուով՝ 236 մարդ⁶³:

Կրթական գործի կազմակերպում

Աշխարհամարտի տարիներին Արեւելեան Հայաստան անցած գաղթականութեան մի ստուար զանգուածը երեխաներ էին: Միայն Ալեքսանդրապոլի գաւառում 1915 թ. հոկտեմբերի 1-ի դրութեամբ անչափահասները կազմում էին 44%⁶⁴: Երբ առաջին ամիսների խուճապային տրամադրութիւնները հանդարտուեցին, եւ գաղթականութիւնն ապահովուեց ապրուստի տարրական միջոցներով «գլուխ բարձրացրեց երեխայոց կրթութեան խնդիրը»⁶⁵:

Ալեքսանդրապոլում գաղթական երեխաների համար առաջին դպրոցը բացուեց 1915 թ. ամռանը: Դեկտեմբերին 296 երեխաների համար դպրոցներ բացուեցին նաեւ Մեծ Ղարաքիլիսա, Համամլու, Ղշլաղ, Բողգիւղ եւ Բեքանտ գիւղերում⁶⁶: Յետագայում, պայմանաւորուած երեխաների թուի աճով, դպրոցներ բացուեցին նաեւ գաւառի միւս բնակավայրերում: Դրանց մի մասը լիովին անկախ էր, ապահովուած շէնքով, առանձին ուսուցչական անձնակազմով եւ աչքի էր ընկնում կանոնաւոր դասընթացով: Դպրոցների միւս մասը զուրկ էր սեփական շէնքից, ուսուցչական անձնակազմ չուներ, իսկ դասերն անցկացւում էին տեղի ծխական դպրոցնե-

60 Ալեքսանդրապոլ քաղաքի եւ համանուն գաւառի տարածքում Քաղաքների միութեան կոմիտէի ծախսած հիւանդանոցային գործունէութեան մասին մանրամասն տե՛ս Положение беженцев в Александропольском районе, Баку, 1915; Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них, Тифлис, 1915; Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915 г., вып. 2, Тифлис, 1915:
 61 «Աշխատանք», 1916, թիւ 44, 1 հոկտեմբերի, էջ 4:
 62 ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թ. 3-7:

63 «Մշակ», 1915, թիւ 203, 17 սեպտեմբերի, էջ 2: Ի դէպ, 1915 թ. օգոստոսի վերջին տասնօրեակում էջմիածնում մահացածների թիւը հաշուելիս Ա. Դօն գում է 2613 մարդ (տե՛ս Ա. Դօ, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թթ., Երեւան, 1917, էջ 485):
 64 1915 թ. հոկտեմբերի 1-ին անցկացուած մէկօրեայ ցուցակագրման տուեալներով Ալեքսանդրապոլ քաղաքում եւ համանուն գաւառում կար 22,815 գաղթական, որից 10,055-ը երեխաներ էին (տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1287, թթ. 3-5):
 65 «Գաւառի ձայն», 1916, թիւ 3, 23 յունուարի, էջ 4:
 66 «Մշակ», 1916, թիւ 210, 22 սեպտեմբերի, էջ 3. «Աշխատանք», 1916, թիւ 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

րի շէնքերում՝ օրուայ երկրորդ կէսին: Գիւղական բնակավայրերում խնդրի լուծումն աւելի դիւրին էր: Օրինակ, ըստ «Հորիզոն» պարբերականի, Բուլանդի կենտրոն Կոփից գաղթած 64 երեխաները յաճախում էին Համամլուի ծխական դպրոց⁶⁷: «Համբաւաբերի» հաւաստմամբ՝ Սոգութի ծխական դպրոցում էին սովորում դերիկցի 50 երեխաներ⁶⁸, իսկ Բաշգիւղում՝ 45 մշեցիներ եւ սասուցիներ⁶⁹:

Տեղի դպրոցները գաղթական սաներին ընդունում էին սիրով, սակայն լուծել վերջիններս խնդիրները յաջողուած էր ոչ միշտ: Օրինակ՝ կային գիւղեր, որտեղ աշակերտների թիւը մեծ էր, իսկ դպրոցի շէնքը՝ փոքր: Միւս գիւղերում պահանջ կար ուսուցչի, գրեւորական պիտոյքների, հագուստի ու սննդի: Մի ողջ սերունդ անգրագիտութեան չմատնելու համար հասարակական կազմակերպութիւնները ստիպուած եղան իրենց ուսերին վերցնել նաեւ գաղթական երեխաների կրթութեան գործը:

Արեւելահայ մամուլն այս հարցում եւս բաւարար չահագրգռուածութիւն չցուցաբերեց եւ միայն հազուադէպ փորձեց վեր հանել ոլորտում առկայ խնդիրներն ու դրանց լուծման հնարաւոր տարբերակներ մատնանշեց:

Օրինակ՝ «Մշակ» պարբերականը գաղթական երեխաների համար բացուած դպրոցների գոյութեանը սպառնացող վտանգներից առանձնացրել էր երկուսը: Առաջինը դասագրքերի պակասն էր, երբ 60 աշակերտին բաժին էր հասնում 30 գիրք, եւ «ուսուցիչը ստիպուած էր փոխնի փոխ մէկէն առնելով միւսին տալ, որպէսզի գիրք չունեցողն ալ իր դասը սովորի»: Յաջորդ՝ առաւել կարեւոր խնդիրը, որ պահանջում էր անյապաղ լուծում, ցածր վարձատրութեամբ պայմանաւորուած՝ ու-

սուցչական անձնակազմի սակաւութիւնն էր: «Այսպիսի շատ ամսականով մը ուսուցիչը, ներկայ թանկ ու կրակ ժամանակին,- գրում է պարբերականի Վտարանդի ստորագրութեամբ թղթակիցը,- պիտի հոգայ իր բարոյական եւ ֆիզիքական պէտքերը եւ միեւնոյն ատեն պիտի ապրեցնէ իր ընտանիքի անդամները՝ եթէ վերջիններս ունենալու դժբաղտութիւնն ունի»⁷⁰: Յոգուածագիրը գաղթականների խնամքով զբաղուող հասարակական կազմակերպութիւններին կոչ էր անում գիւղերում դպրոցների շէնքեր առանձնացնել՝ ապահովուած բարձր վարձատրուող ու աշակերտների թուին համապատասխան ուսուցչական անձնակազմով եւ գրեւորական պիտոյքներով:

Հասարակական կազմակերպութիւնների աշակցութիւնը դպրոցների անխափան գոյութեան գրաւական էր համարում նաեւ «Գաւառի ձայնը»: Օրաթերթին թղթակցած թ. իր մտայնաբան առաջարկում էր «Եղբայրական օգնութեան» Ալեքսանդրապոլի կոմիտէի օրինակով դպրոցներին մէկ աշակերտի հաշուով 2-ական ուսուցիչ յատկացնել գրեւորական պիտոյքներ գնելու համար եւ նուազագոյնը 50 ուսուցիչ բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը⁷¹:

Գաղթական երեխաների համար երբեք էլ բացուած դպրոցների շարքում արեւելահայ մամուլը գրեթէ միաբերան առաւել յաջողուած է համարել «Եղբայրական օգնութեան» կոմիտէի կողմից 1915 թ. յունիսին Ալեքսանդրապոլում հիմնուածը՝ «Գաւառի ձայն» պարբերականի խմբագիր Յովսէփ Միրզոյեանի տնօրինութեամբ: Գաղթական սաների առջեւ դպրոցն իր հիւրընկալ դռները բացել էր յունիսի 22-ին: Իբրեւ ամառային՝ այն իր 280 սաներով (200 հայ, 80 յոյն) մինչեւ սեպտեմբերի 1-ը գործել էր Արղութեան եւ Սէյլա-

67 «Հորիզոն», 1916, թիւ 43, 25 փետրուարի, էջ 3:
 68 «Համբաւաբեր», 1916, թիւ 24, 12 յունիսի, էջ 749:
 69 Նոյն տեղում:

70 «Մշակ», 1916, թիւ 210, 22 սեպտեմբերի, էջ 3:
 71 «Գաւառի ձայն», 1916, թիւ 3, 23 յունուարի, էջ 4:

նեան դպրոցների շէնքերում⁷²: Երբ սեպտեմբերին տեղական դպրոցներում վերսկսուել էին պարապմունքները, Արդութեան եւ Սէյլանեան դպրոցների շէնքերը վերադարձուել էին իրենց տէրերին: Իսկ գաղթականական դպրոցը, Բաքուի եւ տեղի Ազգային կոմիտէներից 10,000 ռուբլի ստանալով, նորից վերաբացուել էր հոկտեմբերի 15-ին: Այժմ արդէն դպրոցն ունէր 11 բաժանմունք (9 հայկական եւ 2 յունական) եւ 419 սան: Աշակերտներից 316-ը հայեր էին, 54-ը՝ յոյներ, մէկը՝ ռուս: Սրանցից 276-ը ռուսահայատակ փախստականներ էին, 138-ը՝ արեւմտահայ, իսկ 2-ը՝ պարսկահայ: «Հորիզոն» պարբերականի հաւաստմամբ՝ դպրոցը աչքի էր ընկնում գերազանց մաքրութեամբ ու կարգապահութեամբ, իսկ «սաները ոչ միայն տաք էին հագնւած, այլեւ ունին համազգեստ, որպիսին չունին միւս ծխական դպրոցներում սովորողները»⁷³:

Ամփոփելով 1914-1918 թթ. Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան շրջանում առկայ խնդիրների լուսաբանման գործում արեւելահայ մամուլի ունեցած դերակատարութեան համառօտ քննութիւնը՝ նշենք, որ մամուլը հետեւել է գաղթականների տե-

ղաւորման եւ տարրական կենսապայմանների ապահովման աշխատանքներին, ներկայացրել է խնամատարութեան ոլորտում հասարակական կազմակերպութիւնների ձեռքբերումները, մատնանշել է առկայ խնդիրներն ու առաջարկել դրանց լուծման իր տարբերակները:

Աշխարհամարտի տարիներին «Մշակ», «Գաւառի ձայն», «Աշխատանք», «Հորիզոն», «Համբաւաբեր» պարբերականների էջերում առանձին քննարկման թեմաներ են դարձել այնպիսի հարցեր, ինչպիսիք էին, օրինակ, տարրական կենցաղային պայմանների կամ ձմեռային հագուստի եւ տաք վերմակների բացակայութիւնը, գիւղական բնակավայրերում գաղթականների անհամաչափ տեղաբաշխուածութիւնը, գաղթականներ-տեղաբնիկներ փոխյարաբերութիւնները եւ այլն:

Պարբերական մամուլն իր համեստ ներդրումն է ունեցել նաեւ հիւանդանոցային եւ դպրոցական գործի կազմակերպման ոլորտներում: Օրինակ՝ գիւղական բնակավայրեր գործուղուած թղթակիցների անձնուրաց աշխատանքի շնորհիւ հասարակութիւնը ժամանակին իրազեկուել է համաճարակային բռնկումների մասին, ուրեմն եւ հնարաւոր է եղել խուսափել մարդկային աւելի մեծ կորուստներից: Նոյն թղթակիցների շնորհիւ հասարակական հնչեղութիւն են ստացել եւ մասամբ լուծուել նաեւ գաղթական երեխաների համար բացուած դպրոցների խնդիրները:

Ցաւօք, Ալեքսանդրապոլի գաւառում հաստատուած գաղթականութեան խնդիրների լուսաբանման գործում արեւելահայ մամուլի ակտիւութիւնը 1915-1916 թթ. սահմանափակուեց: Փետրուարեան յեղաշրջումից յետոյ գաղթականութիւնն իր խնդիրներով մամուլի էջերից մղուեց յետին պլան, իսկ առաջնային քննարկման առարկայ դարձաւ բուռն զարգացում ապրող քաղաքական կեանքը:

72 Դպրոցի մասին մանրամասն տե՛ս Աստ. Ֆրոնտ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8-9. Արեւմտահայ գաղթականութիւնը Ալեքսանդրապոլի գաւառում 1914-1922 թթ., Փաստաթղթերի ժողովածու, խմբ. Կ. Ալեքսանեան, Երեւան, 2012, փաստ. թիւ 18, էջ 78-82. «Армянский вестник», Москва, 1917, год изд. 2, N 8, 20 марта, стр. 11.
73 Դպրոցի 276 ուսանալատակ սաներից 269-ը գաղթել էին Կարսից, Օլթիից, Արդաբադից եւ Սարիղամիշից, 6-ը՝ Արդուիցից եւ Տանուտից, մէկը՝ Միւսկի մահաձից: Ռուսահայատակ սաներից 12-ը երկրորդմանի ծնողագործներ էին, 20-ը՝ միակողմանի: 138 արեւմտահայ սաներից 15-ը գաղթել էին Մանազկերտից, 11-ը՝ Էրզրումից, 20-ը՝ Բիթլիսից, 16-ը՝ Վանից, 43-ը՝ Բուլանդից, 14-ը՝ Մուշից: Արեւմտահայերից երկրորդմանի ծնողագործներ էին 29-ը, միակողմանի՝ 48-ը (մանրամասն տե՛ս «Հորիզոն», 1916, թիւ 48, 2 մարտի, էջ 4):

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Լուսինէ Սանասեան

Յակոբ Օշականն այն մտաւորականներից էր, ով մշտապէս եղել է կենդանի գրական միջավայրի ակտիւ մասնակիցը, իսկ որպէս գրաքննադատ՝ մատը չի հեռացրել հայ գրականութեան զարկերակից, չի խուսափել ժամանակի ցաւոտ գրական հարցերը շօշափելուց: Իր ստեղծագործական կեանքի մեծ մասն ապրելով Սփիւռքում՝ Օշականն անձամբ զգացել է Սփիւռքի ու սփիւռքահայի տագնապը եւ իր անփոխարինելի ներդրումն ունեցել սփիւռքահայ գրականութեան սկզբնաւորման ու զարգացման մէջ: Իր ստեղծագործութեան մէջ եւ գրաքննադատական յօդուածներում Օշականը փորձել է քննել Սփիւռքի գրականութեան իւրայատուկ հարցերն ու որդեգրած ուղղութիւնը: Սփիւռքի՝ իբրեւ գրական միջավայրի մասին Օշականի տեսակէտը բացայայտուած է նրա տարբեր գործերում ու յօդուածներում, երբեմն նոյնիսկ առերեւոյթ թեմայի հետ կապ չունեցող պահին ու անսպասելի: Մի դէպքում նա ահա այսպէս է բնորոշում սփիւռքեան գրականութիւնը. «Միւրոյ, ցաւի, կարօտի, զգայական յանգեցումների, ախտազին սրսփուքի, նոր զգայութեանց ետեւէն խուլ ու յամառ արշաւի, լքումի, դառնացումի, անզօր համակերպումի միացումը անխնամ, անտարազ, ապերասան թեքնիքի մը վրայ, — գրեթէ սուած եղայ մեր նոր քերթողութեան գլխաւոր յատկանիշները»¹:

Ինչպէս ընդգծում է Օշականը, եթէ Սփիւռք ասելով հասկանում ենք ժողովրդի՝ հայրենիքից հեռու ապրող մի հատուած,

հայութեան համար դա նոր երեւոյթ էր. «Մի՛ մոռնաք որ Արեւմտահայ գրականութեան խանձարուրը դրուած է Վենետիկ, Փարիզ, Իզմիր, Պոլիս. քաղաքներ, որոնք աւելի քան Սփիւռք էին հարկւր տարի առաջ: Բայց որոնցմէ զարգացաւ հայ ժողովուրդին հաւաքական հարստութեան գանձարանին վրայ նոյնքան անփոխարինելի գեղեցկութեամբ վկայութիւններու հանդէս մը՝ Արեւմտահայ Գրականութիւնը»:

Արեւելահայ Գրականութեան խանձարուրը դրուած է Մոսկուա, Պոմպէյ, Մատրաս, Թիֆլիս, քաղաքներ ասոնք ուրիշէ մը մեզի եկած եւ նոյնքան սրտառուչ գեղեցկութեամբ ուրիշ հանդէս մը վկայութիւններու, որուն անունն է Արեւելահայ Գրականութիւնը»²:

Սակայն Եղեռնից յետոյ Սփիւռքը՝ իբրեւ վայր եւ իբրեւ իրողութիւն, նոր իմաստ ստացաւ: Արեւմտահայութեան մաղապուրծ փրկուած մասը 1920-ականներին վերջնականապէս ցրուեց աշխարհով մէկ՝ Միջին Արեւելքից մինչեւ Եւրոպա ու Ամերիկա՝ միանալով արդէն կազմուած գաղութներին, կամ նոր գաղթօջախներ հիմնեց: Այդուհետեւ Սփիւռքը դարձաւ նոր աշխարհահայացք, մտայնութիւն ու ապրելակերպ:

Վերապրող գաղթականների հոգու մէջ ծնուած գոյատեւման պայքարը եւ թէ՛ իբրեւ մարդ, թէ՛ իբրեւ ազգութիւն յարատեւելու վճռականութիւնը ծնեց մի նոր երեւոյթ, որը ենթադրում էր նոր միջավայր, նոր աշխարհահայացք, նոր իմաստ ու նոր կառոյց: Հայ մտաւորականութիւնը, շփո-

1 Բ. Թաշեան, Մայրիներու շուքի՛ն տակ, Պէյրութ, 1983, էջ 48-49:

2 Յ. Օշական, Անգղի՛ն կտուցի՛ն տակ, Պէյրութ, 2008, էջ 330: